ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

18. 12. 2021 *Ք. Իջևան*

Նախագահ՝ Վ. Ա. Աղաբաբյան

Քարտուղար՝ Ք. Հ. Մխիթարյան

Կիրառական արվեստի ֆակուլտետի խորհրդի նիստին մասնակցում էին գիտական խորհրդի բոլոր անդամները:

ՕՐԱԿԱՐԳ

1. Առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ ստուգումների և քննությունների ժամանակացույցի քննարկում և հաստատում: /Զեկ. Վ. Աղաբաբյան/
2. 2021-22 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցի քննարկում և հաստատում: /Զեկ. Վ. Աղաբաբյան/
3. 2021-22 ուս.տարվա առաջին կիսամյակի ուսումնական պարապմունքների ավարտի գործընթացի քննարկում՝մուտքերի կատարողականով: /Զեկ. Վ. Աղաբաբյան/
4. Ընթացիկ հարցեր:

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը: Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ հանդես եկավ Վ. Աղաբաբյանը: Նա ներկայացրեց 2021-2022 ուստարվա առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը: Նշեց, որ այն քննարկվել է ուսանողների և դասախոսների հետ: Զեկուցողը փաստեց, որ երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների հարցաշարերը ժամանակին տրամադրվել են

ուսանողներին: Քննությունները կանցկացվեն առկա ձևաչափով: Դեկանը հորդորեց դասախոսներին հնարավորինս լինել օբյեկտիվ, պատճառաբանել նշանակած միավորը, բողոքների և դժգոհությունների դեպքում հետևել համապատասխան ընթացակարգերին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀԴՄ անդամ Ք. Մխիթարյանը, ՀՆՄ անդամ Ա. Չիբուխչյանը, ՀՆՄ անդամ Տ. Բագամյանը

ՈՐՈՇԵՑԻՆ.

2021-2022 ուստարվա առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների ընթացքը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցող Վ. Աղաբաբյանը ներկայացրեց, որ ձմեռային քննաշրջանի նախապատրաստական աշխատանքները ավարտված են: Կազմվել է քննաշրջանի ժամանակացույցը, որը քննարկվել է ամբիոններում և ուսանողների շրջանում: Ամբիոններում քննարկվել և հաստատվել են հարցատոմսերը: Ժամանակացույցը ներկայացվել է Ուսումնամեթոդական վարչություն և հաստատվել: Կազմվել է օրացուցային գրաֆիկ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀՆՄ անդամ Հ. Մխիթարյանը, ՀՆՄ անդամ Ա. Չիբուխչյանը, ՀՆՄ անդամ Մ. Ստեփանյանը

ՈՐՈՇԵՑԻՆ.

2021-2022 ուստարվա առաջին քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների ընթացքը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը: Նա նշեց, որ կիսամյակի կտրվածքով ստուգվել է ֆակուլտետում առարկայական ծրագրերի կատարման ընթացքը, ծրագրերի կատարողականը և դրան համապատասխան մատենավարության վիճակը: Զեկուցողը նշեց, որ դասախոսների մոտ նկատելի են ծրագրերի գրեթե ամբողջական իրականացում /որոշ դեպքերում նկատելի է մեկ մուտքի պակաս, որը հիմնականում պայմանավորված է ոչ աշխատանքային օրերով և նախատեսվում է քննաշրջանին զուգահեռ հնարավորինս շտկել բացթողումները/: Որոշ դասախոսների մոտ նկատվել են մատենավարական թերացումներ: Այդ բացերը քննարկման և շտկման փուլում են:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀԴՄ անդամ Ք. Մխիթարյանը, ՀՆՄ անդամ Հ. Ասատրյանը, ՀՆՄ անդամ Տ. Բագամյանը

ՈՐՈՇԵՑԻՆ.

2021-2022 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական պարապմունքների մուտքերի կատարման ընթացքը գնահատել բավարար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ. Աղաբաբյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ք. Մխիթարյան